ԹԵՄԱ 4 ՄԻՋՆԱԴԱՐԻ ԱՎԱՐՏԸ: ՓՈՓՈԽՎՈՂ ՅԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

§ 57. ՔԱՂԱՔԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎՐՈՊԱՅՈՒՄ ՈՒՇ ՄԻՋՆԱԴԱՐՈՒՄ

1

Ծովային առևտուրը իրենց ձեռքն էին վերցրել փայատիրական ընկերությունները, որոնք կառավարությունից որևէ երկրի հետ առևտուր անելու մենաշնորհ էին ստանում: Փայատերերը ապրանքը գնում էին համատեղ, իսկ եկամուտները բաժանում էին՝ ելնելով նրանից, թե ով որքան գումար է ներդրել: Առավել հարուստը Արևելահնդկական ընկերությունն էր, որը առևտուր անելու մենաշնորհ էր ստացել Հնդկական և Խաղաղ օվկիանոսների ափամերձ երկրներում: Անգլիայի արքաները հովանավորում էին այդ ընկերությունները, քանզի դրանք մեծ հարկեր էին մուծում թագավորական գանձարան:

Ծովային առևտրում Անգլիայի գլխավոր մրցակիցը Իսպանիան էր, որը տիրում էր ամենաշատ գաղութների: Իսպանիան արգելում էր օտարերկրյա վաճառականներին իր գաղութների հետ առևտուր անել: Բայց գաղութաբնակները իսպանական ավելի թանկ ապրանքներից գերադասում էին թաքուն անգլիական էժան ապրանքներ գնելը:

2

134 առագաստանավերից բաղկացած իսպանական նավախումբը շարժվեց դեպի Անգլիայի ափերը: Նավերի վրա կար ավելի քան 20 հազար զինվոր, նրանք պետք է ափ իջնեին Թեմզայի գետաբերանում: 1588 թ. անգլիական նավերը Լա Մանշ նեղուցում հարձակվեցին իսպանական նավատորմի վրա: Ծովամարտը տևեց 2 շաբաթ: Ծանրաշարժ իսպանական նավերը, որոնք հիմնա–կանում օգտագործվում էին զորք և բեռներ տեղափոխելու համար, չկարողացան առավելության հասնել արագընթաց ու թեթև անգլիական նավերի նկատմամբ, որոնց նավավարները հմուտ ծովահեններ էին: Շատ նավեր կորցնելով՝ իսպանական նավախումբը դուրս մղվեց դեպի Հյուսիսային ծով: Ուժեղ փոթորիկը ցիրուցան արեց մնացած իսպանական նավերը, մի մասը խորտակվեց, մյուսները ջարդուփշուր եղան՝ զարնվելով ափամերձ խութերին: Իսպանական նավախմբի միայն խղճուկ մնացորդը՝ 43 նավ կարողացավ վերադառնալ հայրենիք:

3

Անգլիան ձգտում էր պահպանել և ամրապնդել իր դրությունը հյուսիսային ծովային առևտրական ուղիներում և թշնամաբար էր տրամադրված Իսպանական միապետության նվաճողական ծրագրերի նկատմամբ: Սակայն Անգլիան չէր էլ ցանկանում, որ Իսպանիայի հակառակորդները լիակատար հաղթանակ տանեն, քանի որ Անգլիան մրցակցում էր Ֆրանսիայի հետ դեպի Արևելք տանող միջերկրածովյան ուղիներին տիրելու հարցում: